

5425

3KN14

U-93u

Ս Ի Մ Ա Կ

Ը Ն Կ Ե Ր

ԱՍՔԱՆԱԶ ՄՌԱՎՅԱՆ



3K719
Մ-930

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1929

ՀՈՐԳ.
Մ-930

պր.


10 AUG 2005

14 NOV 2009

Ը Ն Կ Ե Ր
ԱՍՔԱՆԱԶ ՄՌԱՎՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1929



122 FEB 2013


0005 00A 0 1

5425



1160
42.

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ
Պատ. № 1091. Հրատ. 1097.
Գրառեպ. № 2817. Տիրած 600.



Ա. Մ. Ա. Վ. Յ. Ա. Ն.

(1886—1929)

ԸՆԿ. ԱՍԲԱՆԱԶ ՄՈՒՎՅԱՆ

(Համառոտ ակնարկ կյանքի յեղ գործի մասին)

1. ԿՅՍՆՔԸ

1886 թվի հունվար ամսին Գյանջալուս — մի թեև մեղանախան, բայց աղքատ ընտանիքում ծնվեց Ասբանազ Մուսվաթյանը: Նրա մանկության մասին շատ քիչ բան գիտենք. առհասարակ նա են մարդկանցից եր, վորոնք չեն սիրում իրենց մասին խոսել: Սիրում եր յերբեմն խոսել անցյալում արած գործի մասին, իսկ իրեն մասին չեւ խոսում:

Ասում են, վոր դեռ մանկությունից ընկ. Ասբանազը լուրջ ու խոհեմ ե յեղել, դաստիարակում ամենքին ոգնող և թուլերի դասերը սովորեցնող, ու նկատողություն ստացել ե միայն դաս չիմացող ընկերներին հուշելու համար:

Ամեն մի անարդարություն և առհասարակ անիրավ տեղը կատարված գործ շատ զայրացնում եր նրան, և չերբ միջամտել չեւ կարող, նա միայն անքերը չում եր, շրթունքները կրծոտում և թույն հավաքում մաքում անիրավ ու վատ գործ անողների դեմ:

Դեռ շատ վաղ հասակում, յերբ նա ծխական դպրոցն ավարտել էր ու մտել քաղաքային դպրոց—դեռ 1900 թվին, յերբ ընդամենը 14 տարեկան էր,—նա մասնակցում է աշակերտական գաղանի կազմակերպություններին:

Անշուշտ եղ աշակերտները պալլո հասկացողություն չունեին հասարակական յերևութների ու դասակարգային կռվի մասին, բայց նրանց մանուկ հոգին տանել չեր կարող հին աշխարհի անիրավությունները:

1903 թվին Ասքանազին ուղարկում են Եջմիածնի Գևորգյան ձեմարան: Նրա հոգում արդեն կար վորոշ թույն ընդգեմ ճնշողների. հաթեկ պատանի, բայց արդեն գիտեր հարստահարվողների մասին: Յերկու տարի ձեմարանում սովորելով՝ նա իր քաղաքային դպրոցում սովորած ուսուցիչների վրա ավելացնում է հայերեն լեզվի ուսումնասիրությունը,—մի բան, վոր նա յերբեք չդադարեց ու իր ասպագա կյանքի դժվարությունների ընթացքում միշտ սովորում էր հատկապես եղ յերկու լեզուները—ու նա շատ լավ գիտեր թե ուսուցիչներ, թե հայերեն:

1905 թվին, յերբ նա արդեն իր յերիտասարդություն էր մտնում, 19 տարեկան հասակում, նա արդեն այնքան լուրջ ու խոհուն տղա յեր, այնքան պարզ պատկերացում ուներ դա-

սակարգերի ու նրանց պալքարի մասին, վոր Եջմիածինցիների խաբեբայությունները տանել չեր կարող—այնտեղի ողը անտանելի խեղդող էր նրա համար. նա հուզում ու ալեկոծում էր ամբողջ աշակերտությունը, նա ըմբոստանում էր ուսուցիչների անմիտ ու անողուտ կարգադրությունների դեմ—և 1905 թվի աշնանը հեռացրին նրան ձեմարանից, իբրև անհանգիստ ու խռովարար տղա, իբրև մեկը, վոր քննադատել գիտե. իսկ են ժամանակ աշակերտը քննադատելու, դպրոցական վարչություն կարգադրություն մասին խոսելու իրավունք չուներ:

Եղ 1905 թվի ամառը 19 տարեկան Ա. քանազը իրենց քաղաքում՝ Գյանջալում մտնում է ՍԴԲԿ մեջ՝ և բալլեիկների ֆրակցիան: Այսինքն իր դեռ պատանի կյանքը նվեր է բերում բանվոր դասակարգի կռվին, պարտք է վերցնում վրան իր կյանքի մեջ միշտ և ամեն բանում գերադասել դասակարգային պալքարը և բանվոր դասակարգի շահը և մինչև իր սրտի վերջին զարկը նա հավատարիմ մնաց իր ալլ պարտքին:

Միջնակարգ կրթությունն ավարտելու համար Ասքանազը 1905 թ. աշնանը գալիս է Յերևանի թեմական դպրոցը: Եղ ժամանակ հընչակյան կուսակցության քայքայման շրջանն էր, և Ասքանազը եղ քայքայման գործում, եղ ժո-

դոմներում - իր պատանեկական կորուվով ու մտածված ճառերով խոշոր դործ ե կատարում։ Հենց եղ 1905 թվին ել մի խումբ նախկին հրեա չակյանների ու այլ յերիտասարդների հետ Յերևանում կազմում են առաջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։

Թեմական դպրոցն ավարտելուց հետո նա անցնում ե Գյանջա ե զբաղվում միայն կուսակցական-հեղափոխական գործով։ Մի ամբողջ տարի իբրեւ ագիտատոր-պրոպագանդիստ աշխատելով, անցնում ե Բազու։ Ենտեղ նա Բախխանում Զաբրատ շրջանի բայլչեիկական ֆրակցիայի կազմակերպիչ-ագիտատորն ե լինում։ Ապա 1908 թվի ամառը, լերբ իր ընկերներից միջանիսին ձերբակալում են, ինքն ստիպված ե լինում փախչել իրենց Գյանջայի գյուղերը, ուր մնում ե համարյա մի տարի - իհարկե կրկին գաղանի աշխատանքներ ե տանում։ 1909 թվի ամառը գնում ե Պետերբուրգ (Լենինգրադ), մտնում ե համալսարան ու սովորում ե պատմություն ե հասարակական գիտություններ։ Ուսանող ժամանակ ես նա չի կտրվում կուսակցությունից, ընդհակառակը, ել ավելի լե կոփվում ե մեծ աշխատանք ե տանում։

1915 թվին, զինված գիտությունը՝ նա վերադառնում ե Կովկաս - Թիֆլիս։ Ուսուցիչ ե

լինում Քամոյան դպրոցում ե հենց նույն 15 թ. դեկտեմբերից մեր ընկերներից միջանիսի հետ հրատարակում են «Պայքար» թերթը (եդ մասին հետո)։ Փետրվարյան հեղափոխությունից հետո ընկ. Ասքանյանը կազմակերպիչներից մեկն եր մեր կյանքի - հեղափոխություն հաղթանակների, այդ ժամանակ ել նա ընտրվեց կուսակցություն մեր՝ բայլչեիկական ֆրակցիայի Յերկրային Կոմիտեի անդամ։

1918 թվի ամառը նա շատ-շատերի հետ անցավ Հյուսիսային Կովկաս, աշխատեց ենտեղ Յերկրային Կոմիտեյում - Կոմիտեի քարտուղարն եր - ե զբաղան գործով։ 1919 թվի սկզբում նորից ընտրվեց Յերկրային Կոմիտեի անդամ։ Իսկ 19 թվի ամառը կուսակցությունը նրան ուղարկեց Հայաստան - ենտեղ կուսակցական կյանք ստեծելու ե աշխատանք տանելու։ Ետեղ ընկ. Մուսվյանն ու ուրիշները կազմակերպեցին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը 1919 թվի դեկտեմբեր ամսին։

20 թվի փետրվարին դաշնակները ընկ. Ասքանյանին աքսորեցին Հայաստանից. նա անցավ Թիֆլիս. բայց մենչեիկների համար ել նա անտանելի մարդ եր, միջանի ամսից հետո ենտեղից ելքեցին - աքսորեցին, ե նա գնաց Մոսկվա։ 20 թվի դեկտեմբերին՝ Հայաստանի խոր-

հըրդայնացումից հետո — կուսակցութիւնը նրան
նորից ուղարկեց Հայաստան, ու աշխատեց Հայաստանում
մինչև մահ մնաց ու աշխատեց Հայաստանում

Սկզբում նա յեղավ արագորժողկոմ, ա-
պա ժողկոմխորհի նախագահի տեղակալ, ապա
աշխատանքը նա կատարում էր մինչև իր մահը
իսկ 23 թվից նա շարունակ և անընդհատ լուս-
ժողկոմ էր ու եղ ծանր ու դժվար գործը տա-
րավ պատվով ու զգաստ*):

2. ԳՈՐԾԸ

Կան մարդիկ, վորոնք յերկար են ապրում,
բայց քիչ ապրումներ են ունենում և քիչ էլ
գործ են կատարում, կան մարդիկ էլ, վոր
թեև յերկար չեն ապրում, բայց շատ ապրում-
ներ են ունենում և խոշոր էլ գործ են անում:
Ես վերջի տեսակի մարդկանց թվին եր պատ-
կանում և ընկ. Ասքանազ Մուսվաթյանը, նա ծեր
չէր, քիչ էր ապրել — ընդամենը 43 տարի, բայց
այդ 43-ից 24-ը նա ամբողջովին զրել է աշխա-
տանքի մեջ. նա այդ 24 տարում շատ մեծ
յեռանդ ու կյանք էր ծախսել, զրա համար էլ
չգիմացավ:

*) Ամենը, ինչ վոր զրել էմ, զրել էմ առանց
վորեւ աղբյուրի, հիշել եմ իրեն պատմածները և մեր
միասին աշխատանքը:

Վոր դեռ 1900 թվականից, 14 տարեկանից
նա հետաքրքրվել է շատ բանով և մանկական-
պատանեկական անկեղծութամբ ցանկացել է
գործել, դա չես զեռ գործ կամ աշխատանք չեմ
համարում: Նրա գործունեությունը սկսվում է
1905 թվից, յերբ նա արդեն կազմակերպված, հա-
վասարակշռված մարդ էր — թեև դեռ շատ յերի-
տասարդ՝ 19 տարեկան, — և սոցիալ-դեմոկրատ:

Բանն այն է, վոր շատերն են յեղել սո-
ցիալ-դեմոկրատ, առհասարակ կուսակցության
անդամ և կուսակցական աշխատանք էլ կատա-
րել են, բայց լինել կուսակցության ազիտատոր,
զբաղվել միայն կուսակցական-հեղափոխական
գործով, — դա շատ դժվար բան էր: Պետք էր շատ
հեռատես, շատ սառնասիրտ և շատ պինդ ու
խորագետ լինել: Ու ընկեր Մուսվաթյանը 1905-ից
սկսած պրոֆեսսիոնալ կուսաշխատող է յեղել:

Դեռ Յերեանում — թեմական դպրոցի աշա-
կերտ — նա նոր կազմակերպված խմբակի ամե-
նաճարպիկ աշխատողն է լինում, ու եղ են ժա-
մանակ, յերբ 1905 թվի հեղափոխության շրջա-
նում ու նրանից հետո — եսպիսի տեղերում չե-
ղող պետական — ցարական ժանդարմները չա-
փազանց մեծ ցանկություն ունեյին աչքի ընկ-
նել, պարզեւ ստանալ — հեղափոխական բռնելով:
1906 — 1907 թվականներին բեգերի ու սղա-

լարները քաղաքում—Գյանջալու—ընկ. Ասքանազը ընդհատակյա աշխատանք ե տանում, կազմակերպում ե խմբակներ—նրանց համար գեկուցումներ ու դասախոսություններ ե կարդում, կապ ե պահպանում մյուս կազմակերպությունների հետ—մի խոսքով՝ զաղտնի—ծպտյալ, միշտ լենթակա ձերբակալման ու հալածանքի՝ աշխատում ե անընդհատ:

Սակայն այդ բոլորը նրա հեղափոխական աշխատանքի նախադրումն եր. չերբ 1907 թվից նա անցնում ե Բագու և ընդհատակյա պրոպագանդիստ ե լինում բանվորական մի շրջանում, ալ եդ ժամանակվանից նա կոփվում ե, ամրանում և դառնում իսկական բայլչիկ, ես բառի լայն հասկացողությամբ: Այստեղ սա ավելի շատ աշխատում ե գիշերը բանվորական հանրակացարաններում—ծխի ու կրակի մեջ վառված մարդկանց բացատրելով, թե ովքեր են իրենք, ինչ իրավունքներ ունեն և ինչ պետք ե անեն:

Անշուշտ նա չեր կարող վոստիկանական հրակիչների ու լրտեսների աչքից խուսափել. նրանք շատ խորամանկ ելին և ամեն տեղ մտնող: Ասքանազն ինչքան ել զգուշ եր ու խոհեմ, բայց և այնպես ճանաչում են, հետևում են նրան, և նա ստիպված ե լինում փախչել:

1909 թվին գնում ե Պետերբուրգ (Լենին-

գրադ): 6 տարի և՛ ուսանում ե, և՛ աշխատում—էբբն բայլչիկ. մանավանդ 12—13 թվականներից նա կապվում ե «Զվեզդա» և «Պրավդա» բայլչիկական թերթերի հետ, գրում ե այնտեղ: Նա նամակներով ու գրություններով կապված եր Բագվի, Թիֆլիսի, Գյանջալի կուսկազմակերպությունների հետ և ընկերների՝ նրան գրած նամակները շատ ընդարձակ ելին, մեծ տեղեկություններ ելին տալիս Անդրկովկասի հեղափոխական շարժման մասին, ու նա եդ տեղեկություններից, եդ նամակներից հոգվածներ եր կազմում «Պրավդա»-յի համար:

Եդ շրջանի նրա մեծ աշխատանքներից մեկըն ել այն եր, վոր մեծ քանակությամբ գրականություն, գրքեր, թերթիկներ (լիստովկա) ու թռուցիկներ եր ուղարկում Բագվի և Թիֆլիսի կազմակերպություններին: Ուղարկում եր թե՛ մարդկանց ձեռքով և թե՛ փոստով: Սխալ չիլինել ասել, վոր մեր ընկերներից վոմանք նրա ուղարկած գրքերի ու գրականության շնորհիվ ճանաչեցին բայլչիկներին, հասկացան դասակարգային կովի եյությունը:

Լենինգրադի բանվորության մեջ ևս մեծ աշխատանք ե տարել ընկ. Ասքանազը: Շփվելով մեծ ուսուցչի ընկերների ու աշակերտների հետ, աշխատելով նրանց հետ և նրանց մեջ՝ նա հեղափո-

խականի փորձառությունն և ձեռք բերում: Շատ հարգված ե լինում մանավանդ ուսանողության չքավոր շերտի մեջ, ուր նա կազմակերպչական ու պրոպագանդիստական խոշոր աշխատանք և տանում: Այս ամենի հետ նա իր համալսարանական—ակադեմիական աշխատանքներով ել ելբազմում:

Մինչև այստեղ նրա գործունեությունն առաջին մասն ե, յերբ նա և՛ աշխատում եր, և՛ սովորում, և՛ պատրաստվում: Իսկ յերբ 1915 թ. նա նորից վերադառնում ե Կովկաս—Թիֆլիս, նա վերադառնում ե արդեն իբրև ղեկավար, իբրև կատարելապես հասունացած և գործնական հեղափոխական:

Եղ ժամանակ Թիֆլիսում հայերեն հեղափոխական խոսք չեր լսվում կամ գրվում. մամուլ չկար Ասքանաղի նման մարդկանց համար, իրենց ուղածն արաահայտելու տեղ—հնարավորություն չկար. իրենց նպատակները, ձգտումները բոլորի սեփականությունն դարձնելու առաջարկ չկար: Յեվ ահա—համաձայնության գալով միջանի հայ մենչևիկ ինտերնացիոնալիստների հետ (վրոնք, պետք ե ասել, հետադալում համարյա բոլորն ել անցան մեր կուսակցության մեջ և շատերը չափազանց ակտիվ աշխատողներ են), կազմեցին մի միացյալ խմբագրու-

թյուն—2-ը մենչևիկ, 2-ը բալլչևիկ, և սկսեցին հրատարակել «Պայքար» թերթը: Պետք ե խոստովանել, վոր թերթի ամենաբեղուն գրիչներից մեկը, այն ե՝ ամենաշատ հոգվածներ տվողներից և լուրջ գրողներից մեկը ընկ. Ասքանաղն եր:

Հիմնական գրողները չենց եղ 4 խմբագիրներն ելին և, իհարկե, վոչվոք իր անունով չեր գրում: Շատ տեսակի նյութերի մասին եր գրում ընկեր Ասքանաղը և շատ ստորագրություններով.—քաղաքական առաջնորդողներ, դաշնակների, կադետների, հոգևորականության դեմ խիստ ու կծու հոգվածներ—հասարակական խնդիրների մասին, հատկապես լուսավորության խնդիրների մասին (ժողովրդական թատրոն, ժողովրդական կրթություն և այլն) շատ հոգվածներ ե գրել ընկ. Ասքանաղը: Սաստիկ զայրանում եր գրաբնիչի վրա, յերբ իր կարևոր հոգվածները կրճատում, աղավաղում ելին և՛ կամ բոլորովին արգելում տպել:

Թերթը խմբագրատուն չուներ: Այդ 4 ընկերն ել ուսուցիչ ելին, և Գամոյսն դպրոցի ուսուցչանոցը յերբեմն խմբագրատուն եր դառնում—կամ հենց խմբագիրների վերարկունների գրպանները (մանավանդ ընկ. Սերգո Պանոյանի մեծ գրպանը) խմբագրական արկղներ ելին դառ-

նում: Շատ անգամ ե ընկ. Մռավյանը գիշերն սպասել տպարանում, վոր տեսնի, թե թերթը և հատկապես իր հոդվածը վորքան աղճատված ու հոշոտված ե գալիս գրաքննիչի մոտից. ու յերբ պատուհանները (այսինքն գրաքննիչի կրթ-
ճատած մասերը, վոր թերթում բաց եր մնում) շատ-շատ եյին լինում, ընկ. Ասքանազն իր գրպանից հանում եր Գորկու հեքիաթների թարգ-
մանությունը և գծի տակը լցնում հայհոյելով գրաքննիչին և ասելով. «Բանվորները թող գո-
նե սրանք կարգան»:

«Պայքար» թերթը Թիֆլիսի ու առհասարակ Անդրկովկասի բանվորական շարժման համար մեծ նշանակութուն ունեցավ. բայց եդ մասին ուրիշ անգամ:

Ընկ. Ասքանազը գրում եր «Ա», «Աս.», «Մանուկան», «Այգման», «Մանսուրյան» և այլ ստորագրություններով նայած թե հոդվածն ինչ բնույթ եր կրում: Բանն այն ե, վոր թերթը մեկ եր, բայց խմբագիրները յերկու ռզգոութուն ունեյին, ու յերբեմն ադ յերկու տարբեր հասկացողություններն ու մտեցումները խնդիրներին — արտահայտվում եյին նույն թերթում: Ու ընկ. Ասքանազն եդ բանում շատ հա-
մառ եր և յերբեք զիջումն չեր անում: Սկզբի շրջանում դա ենքան ել աչքի չեր ընկնում,

բայց վերջի շրջանում շատ ավելի յեր յերևում ու մի տեսակ հակասութուն մտցնում: Կային մի յերկու թղթակից ընկերներ ել, վորոնք աշխատում եյին հաշտեցնել, բայց բան չեր դուրս գալիս: Բայց չկարծեք, թե Ասքանազը միայն թերթով և ուսուցչութամբ եր զբաղվում, — նա մասնակցում եր հասարակական կյանքի բոլոր յերևույթներին, — հայ զրոգների յերեկույթ-քըն-
նատականներին, ուր նրա յելույթները շնորհ-
նում եյին դաշնակներին ու ազգայիններին — և ամեն տեղ:

Յերբ Փետրվարյան հեղափոխությունից հետո շատերը և «Պայքար»-ի խմբագիրներից վոմանք (ել այլ) հասարակական գործերով եյին տարված — կամ մենշեիկյան կառավարության կազմակերպման գործ, կամ պրոֆաշխատանքներ — ու եդ ժամանակ լոկ Ասքանազը խմբագրության մեջ կենտրոնական դեմք դարձավ. իր շուրջը հավաքեց յերիտասարդներին, և ապրիլից հունիս (17 թվի) թերթը համարյա գուտ բալլ-
շեիկյան թերթ եր: Մենշեիկները չհամաձայնե-
ցին այդ բանին և քանի վոր թերթի տերը մեն-
շեիկներն եյին համարվում (Обл. Ком.), բալլ-
շեիկներին ընկ. Ասքանազի և Սանոյանի գլխա-
վորությամբ դուրս արին թերթից — Գայանյան
գլխիցի պատմական ժողովում:

Հենց հաջորդ որերին նույն ընկերների դե-
կավարութամբ, վորոնց միացան աքսորից վե-
րադարձած (ընկ. Կասյանն ու) ուրիշները, սկսե-
ցին հրատարակել «Բանվորի կոիվ», ապա «Բան-
վոր» թերթերը: Ընկեր Ասքանազն եստեղ ել
հիմնական կամ իրական իս'բազիրն եր և գործը
տանողը: Չափազանց վոգևորվում եր, յերբ յե-
րիտասարդ ընկերները լուրջ քաղաքական և լավ
հոգվածներ եյին գրում:

Միաժամանակ նա խմբագրում եր ռուսե-
րեն «Набат» և «Волна» թերթերը, ուր շատ
հատու ու կրակոտ հոգվածներ եր գրում դաշ-
նակների և ազգայնականների դեմ:

18 թվին ընկ. Մուսվյանը Յերկրային Կոմի-
տեյի անդամ եր, անցավ Վլադիկավկազ և խմբ-
ագրում եր «Кавказская Правда» թերթը:
Քաղաքացիական կոիվների և ծանր ապրումնե-
րի շրջանն եր, և ընկ. Ասքանազը կուսակցու-
թյան պատվերները տանում եր անթերի ու
ժամանակին:

Յերբ 19 թվին ուրիշ ընկերների հետ ան-
ցավ Հայաստան — դաշնակների դաժան լծի տակ
աշխատավորութունը սիրով ընդունեց ընկ. Աս-
քանազին ու նա վոչ միայն Յերևանում, այլ
շարունակ վտանգի յենթակա, հազար ու մի հե-
ղություններով ու չարչարանքներով — մի քանի

ընկերների հետ Հայաստանում կուսակցութուն
կազմակերպեցին, ստեղծեցին:

Մաուզերիստների յերկրում նա շատ-շատ
անգամ անցավ Դիրիշան, Լոռի, Աշտարակ,
Ն.-Բայազետ և ամեն տեղ կազմակերպում, վոգե-
վորում և ստեղծում եր կոմ. կուսակցության
համար հենարաններ:

Դաշնակցությունն (ու նրա) մաուզերիստները
իրենց արարքներով հուսահատեցրել, աղքատա-
ցրել և լքման եյին հասցրել աշխատավորությանը:

Յեվրոպական պետություններն ու նրանց
արբանյակները, վոր գալիս եյին դաշնակցական
Հայաստան, վոչինչ լավ բան չեյին բերում չար-
քաշ աշխատավորությանը, այնպես վոր ընկեր
Ասքանազի և մյուսների գործունեությունը շատ
պարարտ հող ուներ, և նրանց գործը հաջող եր
գնում:

Շատ պարզ ե, վոր կուսակցական այդպիսի
յեռանդուն աշխատանքը չեր կարող դուր գալ
մաուզերիստ-դաշնակցականներին, ու քչեցին
նրան:

Ընկ. Ասքանազի աշխատանքների և գործի
3-ի դ շրջանն սկսվում ե են ժամանակից, յերբ
նա 20 թվի դեկտեմբերին վերադառնում ե ար-
դեն Սուրհ. Հայաստան: Դաշնակները 2 ու կես
տարում իշխանութուն և պետութուն ստեղծել

չկարողացան և չեղին ել կարող: Այժմ խորհ. իշխանության հենց առաջին որերին մեր ղեկավարների վրա ծանր պարտականություններ ընկնում՝ հաստատուն իշխանություն կազմել և պետություն ստեղծել. Ընկ. Մոավյանին վիճակվեց շատ լուրջ ու պատասխանատու գործ—բարի հարեանալան հարաբերություն ստեղծել թե մեզ շրջապատող և թե առհասարակ մյուս պետությունների հետ: Արտաքին գործերի ժող. կոմիսսար լինել 20, 21 թվին—դա հեշտ չէր: Պետք էր մեծ հմտություն և խոր միտք:

Բայց միայն արտգործօղկում չէր նա. — նա հետո ժողկոմխորհի նախագահի աեղակալ էր:

Հայաստանի քաղաքացիական կռիվները շրջանում ընկ. Ասքանազը Դիլիջանում էր և լուսավորության գործի գլուխ. աշխատում էր որ ու գիշեր և իր քաջալերական խոսքերով հուսադրում բոլորին:

Նրա աշխատանքները մեր յերկրի տնտեսական և լուսավորության վերականգնման շրջանում շատ մեծ են չեղել: Նա կուսակցական ղեկավար մարմնի մեջ լինելով (1921 թվից չեղել է միշտ Կենտկոմի նախագահության անդամ) ու լավ ըմբռնելով կուսակցության բաղաժանությունը մեր յերկրի շինարարության գործում, ամեն բան արել է այդ նպատակի համար:

Վերակառուցման շրջանում արդեն տարեկանորը մեր կյանքին, մեր տնտեսական պայմաններին հարմարեցնելու խնդիրը, կուսակցությունը դնում էր մեր տնտեսությունը, մեր աշխատանքի բոլոր բնագավառները, մեր կուլտուրական կյանքը նոր հունի մեջ դնելու, նոր ձևով ասանելու հարցը, և ընկ. Ասքանազն իսկույն ըմբռնում էր, թե մեր կյանքում ինչպես պետք է կատարվի այդ, և անում էր՝ ինչ պետք էր:

1923 թվից ընկ. Ասքանազն անցավ իր սիրած ու փայփայած աշխատանքին. նա յեղավ լուսժողկոմ ու նյութական ծանր ու դժվար պայմաններում լուրջ կերպով զրեց մեր յերկրի կուլտուրական հեղափոխության խնդիրը: Այն բոլորը, ինչ ունենք մենք այժմ մեր կուլտուրական կյանքում—սկսած մանկական ճրագրականներից — դպրոց, պրոֆտեխնիկական կոնսերվատորիա, հիմնարկներ, բանֆակ, կոնսերվատորիա, կարգավորված համալսարան, թատրոն, արիա, կարգավորված կինո, գրականություն, գեղարվեստ խոստացող կինո, գրականություն, գեղարվեստ—մի խոսքով՝ մեր կյանքի կուլտուրական բոլոր յերևույթները ձևակերպվել են և զարգացել ընկ. Մոավյանի ղեկավարությամբ: Մեկ-մեկ գրել, թե նա ինչ է արել լուսավորության գործի համար, դժվար է ու ղեռ հնարավոր էլ չէ. բայց նա եւ 6 տարվա ընթացքում

շատ բան եւ արել, շատ մեծ աշխատանքներ
հիմք եւ դրել: Շատ նոր ու գեղեցիկ մաքեր
մտահղացումներ եւ քաջալերել և շատ-շատեր
եւ իր ուղին ցույց տվել:

Նա յերկար չապրեց, բայց շատ աշխատեց
և շատ գործ արավ:

3. ՆՐԱՆԻՅ ՀԵՏՈ

Այժմ, յերբ նա չկա, ինչ եւ մեր պարտա-
կանութիւնը: Ամենից առաջ նրա նման համբե-
րությամբ, տոկունությամբ և համառությամբ
շարունակել նրա գործը— սոցիալիզմի շինարա-
րության գործը: Իսկ դա ամենից առաջ կու-
սակցության առաջադրած խնդիրներն են— բա-
ղաբական-եյական խնդիրները, ինչպես մեր յեր-
կրի ինդուստրիացման հարցերը, մեր հնգամյա
կի անխախտ և հավելմամբ կատարելը, մեր գյու-
ղատնտեսութիւնը սոցիալիստական ուղիով
վրա դնելն ու մեքենայացումը կոլեկտիւների ու
սովխոզների միջոցով, այլ և ամեն ինչ մաս-
սաջի հետ անելը— մասսայի քննությամբ մե-
բոլոր աշխատանքները մաքրելն ու զտելը
աջ և «ձախ» յերկու ֆրոնտի վրա կովելը
այս ամենից զատ լուսավարության ճակատում
վորի անխոնջ աշխատավորն եր ընկ. Ասքանազը
պետք եւ աշխատենք, վորքան հնար եւ կարճ մի-
ջոցում, ունենալ ընդհանուր և պարտադիր ու-

սում, վերացնենք անգրագիտութիւնը, մասսա-
ներին պրոֆտեխնիկական կրթութիւն տանք,
ժողովրդական տնտեսութեան բոլոր ճշուղերի հա-
մար նոր ու կարմիր մասնագետներ, կադրեր
պատրաստենք, այլ և ազգային փոքրամասնու-
թիւնների կուլտուրական գործը առաջնակարգ
ու հարվածային խնդիր համարենք:

Այսպիսով մենք կատարած կլինենք ընկ.
Մուսկանի ցանկութիւնները:

Իսկ մեր պատանի ու յերիտասարդ ընկեր-
ները պետք եւ որինակ վերցնեն նրանից: Նրա
կշանքի ուղին ուսումնասիրեն և ձգտեն հետեւել
նրան, ապագայում նրա իղձերը կատարելու հա-
մար:



11. *[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side]*
 12. *[Faint, illegible text]*
 13. *[Faint, illegible text]*
 14. *[Faint, illegible text]*
 15. *[Faint, illegible text]*
 16. *[Faint, illegible text]*
 17. *[Faint, illegible text]*
 18. *[Faint, illegible text]*
 19. *[Faint, illegible text]*
 20. *[Faint, illegible text]*
 21. *[Faint, illegible text]*
 22. *[Faint, illegible text]*
 23. *[Faint, illegible text]*
 24. *[Faint, illegible text]*
 25. *[Faint, illegible text]*
 26. *[Faint, illegible text]*
 27. *[Faint, illegible text]*
 28. *[Faint, illegible text]*
 29. *[Faint, illegible text]*
 30. *[Faint, illegible text]*
 31. *[Faint, illegible text]*
 32. *[Faint, illegible text]*
 33. *[Faint, illegible text]*
 34. *[Faint, illegible text]*
 35. *[Faint, illegible text]*
 36. *[Faint, illegible text]*
 37. *[Faint, illegible text]*
 38. *[Faint, illegible text]*
 39. *[Faint, illegible text]*
 40. *[Faint, illegible text]*
 41. *[Faint, illegible text]*
 42. *[Faint, illegible text]*
 43. *[Faint, illegible text]*
 44. *[Faint, illegible text]*
 45. *[Faint, illegible text]*
 46. *[Faint, illegible text]*
 47. *[Faint, illegible text]*
 48. *[Faint, illegible text]*
 49. *[Faint, illegible text]*
 50. *[Faint, illegible text]*
 51. *[Faint, illegible text]*
 52. *[Faint, illegible text]*
 53. *[Faint, illegible text]*
 54. *[Faint, illegible text]*
 55. *[Faint, illegible text]*
 56. *[Faint, illegible text]*
 57. *[Faint, illegible text]*
 58. *[Faint, illegible text]*
 59. *[Faint, illegible text]*
 60. *[Faint, illegible text]*
 61. *[Faint, illegible text]*
 62. *[Faint, illegible text]*
 63. *[Faint, illegible text]*
 64. *[Faint, illegible text]*
 65. *[Faint, illegible text]*
 66. *[Faint, illegible text]*
 67. *[Faint, illegible text]*
 68. *[Faint, illegible text]*
 69. *[Faint, illegible text]*
 70. *[Faint, illegible text]*
 71. *[Faint, illegible text]*
 72. *[Faint, illegible text]*
 73. *[Faint, illegible text]*
 74. *[Faint, illegible text]*
 75. *[Faint, illegible text]*
 76. *[Faint, illegible text]*
 77. *[Faint, illegible text]*
 78. *[Faint, illegible text]*
 79. *[Faint, illegible text]*
 80. *[Faint, illegible text]*
 81. *[Faint, illegible text]*
 82. *[Faint, illegible text]*
 83. *[Faint, illegible text]*
 84. *[Faint, illegible text]*
 85. *[Faint, illegible text]*
 86. *[Faint, illegible text]*
 87. *[Faint, illegible text]*
 88. *[Faint, illegible text]*
 89. *[Faint, illegible text]*
 90. *[Faint, illegible text]*
 91. *[Faint, illegible text]*
 92. *[Faint, illegible text]*
 93. *[Faint, illegible text]*
 94. *[Faint, illegible text]*
 95. *[Faint, illegible text]*
 96. *[Faint, illegible text]*
 97. *[Faint, illegible text]*
 98. *[Faint, illegible text]*
 99. *[Faint, illegible text]*
 100. *[Faint, illegible text]*





ՀՀ Ազգային գրադարան



NL0185865

